Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՊԵՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 2-Ն ԵՎ 4-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 2-Ն որոշման նախաբանում հղումը պետք է կատարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի ոչ թե 6-րդ, այլ՝ 5-րդ կետին:

Որոշմամբ հաստատված հավելվածի վերևի աջ անկյունում նշված որոշման հերթական համարից հետո անհրաժեշտ է նշել «Ն» տառը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով: Սակայն համայնքի ավագանու հաստատմանը ներկայացվել է միայն համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով մինչև ս/թ մարտի 1-ը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել նաև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2019 թվականի հաշվետվությունը:

Թիվ 4-Ա որոշման նախաբանում կատարված բոլոր հղումները սխալ են: Բացի այդ, որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք 23-րդ հոդվածի 6-րդ մասին, համաձայն որի՝ անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
21.02.2020թ.